ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ

1.1. Սույն բաժնի դրույթները կարգավորում են Հաշվի բացման, տնօրինման, փակման կապակցությամբ Բանկի և Հաճախորդի միջև ծագող պայմանագրային հարաբերությունները: Սույն բաժնով չկարգավորվող դրույթները կարգավորվում են Պայմաններով:

1.2. Հաշիվների առանձին տեսակների առանձնահատկությունները և Հաշիվներով իրականացվող գործառնությունների տեսակները կարգավորվում են Պայմաններով, Սակագներով, Տեղեկատվական ամփոփագրերով, ուղեցույցներով, ինչպես նաև Հաճախորդի և Բանկի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

1.3. Ի լրումն Պայմանների և Սակագների՝ Հաշվով կատարվող գործառնությունների վերաբերող և այլ պահանջները կարգավորվում են նաև Դիմում-պայմանագրով, տեղեկատվական ամփոփագրերով, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերով:

1.4. Պայմանների և դրանով նախատեսված այլ փաստաթղթերի դրույթները կիրառվում են նաև սոցիալական ապահովության, սոցիալական փաթեթի հաշիվների, էսքրո հաշիվների, նոտարի դեպոզիտ հաշիվների, կառուցապատողի հատուկ հաշիվների, պատվովճարի հատուկ հաշիվների, Զինծառայողների վնասների հատուցման հաշիվների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հատուկ բանկային հաշիվների նկատմամբ, եթե այլ բան սահմանված չէ հատուկ բանկային հաշիվների առանձնահատկությունները կարգավորող օրենսդրությամբ:

1.5. Բանկը Հաճախորդի համար բացում է Հաշիվ՝ Բանկի սահմանած ձևանմուշով Հաճախորդի՝ Համակարգի/Հավելվածի միջոցով, առձեռն կամ Բանկի համար ընդունելի այլ եղանակով Բանկ ներկայացրած Դիմում-պայմանագրի, Հայտի և/կամԴիմումի հիման վրա:

1.6. Հաշիվների բացումը կատարվում է՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի և/կամ Պայմանների:

1.7. Հաշիվը բացվում է տվյալ հաշվի նպատակային նշանակությանը համապատասխան:

1.8. Սույնով Հաճախորդը տալիս է իր գրավոր համաձայնությունն և հանձնարարում է Բանկին, Բանկի հայեցողությամբ, ելնելով Հաճախորդի լավագույն շահերից, իրականացնել ներքոնշյալ գործողությունները՝ առանց Հաճախորդի լրացուցիչ հանձնարարականի, եթե վերջինիս կողմից այլ գրավոր հանձնարարական, դիմում, հայտ չի ներկայացվել Բանկ.

1.8.1. Հաճախորդի Հաշվին մուտքագրման ենթակա գումարի արժույթին համապատասխան արժույթով Հաճախորդի Հաշիվ չունենալու դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար բացել մուտքագրվող

միջոցների արժույթով Հաշիվ և գումարը մուտքագրել նոր բացված Հաշվին:

1.8.2. Հաճախորդի հետ ֆինանսավորման կամ ժամկետային ավանդի պայմանագիր կնքելիս Բանկն իրավունք ունի Հաճախորդի համար բացել տվյալ պայմանագրի սպասարկման ապահովման, այդ թվում՝ միջոցների մուտքագրման և ելքագրման համար անհրաժեշտ ՀՀ դրամային և/կամ ֆինանսավորման, ժամկետային ավանդի պայմանագրի արժույթին համապատասխանող արժույթով Հաշիվ:

1.9. Բանկը կարող է որոշակի գործառնությունների համար իր հայեցողությամբ ընտրել և օգտագործել Հաճախորդի համապատասխան Հաշիվը: Միևնույն արժույթով մեկից ավելի Հաշիվների առկայության դեպքում Հաճախորդը կարող է տեղեկացնել Բանկին այն Հաշվի մասին, որն օգտագործվելու է համապատասխան գործառնության (օրինակ՝ ավանդի տոկոսների վճարման) համար, եթե դա հնարավոր է տվյալ գործառնության համար սահմանված իրավական ակտով, Բանկի ներքին ընթացակարգերով:

1.10. Բանկն իրականացնում է Հաշվի համալիր սպասարկումը և Հաճախորդի հանձնարարությամբ այն բոլոր հաշվարկային և դրամարկղային գործառնությունները, որոնք ՀՀ իրավական ակտերով արգելված չեն ՀՀ ֆիզիկական անձանց համար:

1.11. Բանկը հաճախորդի Հաշիվների վարումն իրականացնում է, եթե Հաշվի վարման ընթացքում բացակայում է Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված կամ ՀՀ օրենսդրությամբ գործող այլ սահմանափակումները:

1.12. Հաշվով հաշվարկային և դրամարկղային գործառնություններն իրականացվում են հաշվի մնացորդի սահմաններում՝ հաշվի առնելով Սակագներով սահմանված միջնորդավճարների գումարները և պահպանելով չնվազող մնացորդի /սահմանված լինելու դեպքում/ սահմանաչափը:

1.13. Բանկը վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումները, վճարման հանձնարարականների ակցեպտավորումը և կատարումն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը ներառյալ, սակայն չսահմանափակվելով՝ ՀՀ ԿԲ «Հայաստանի Հանրապետության տարածքում վճարման հանձնարարականներով միջոցների փոխանցումների կատարման առավելագույն ժամկետներ սահմանելու կարգին» և Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան:

1.14. Հաճախորդի Հաշվում դրամական միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս են գրվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ: Եթե Հաճախորդի Հաշվին արգելանք դրված չէ, առաջնահերթության իրավունքով Բանկը գանձում է իր նկատմամբ Հաճախորդի չմարված ժամկետանց պարտավորությունների գումարները: Ընդ որում, Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել Բանկի նկատմամբ Հաճախորդի ունեցած պարտավորությունների գումարների

գանձման հերթականությունը:

1.15. Հաճախորդի հաշվին միջոցների մուտքագրումն իրականացնում է համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի և այլ նորմատիվային ակտերի:

1.16. Հաճախորդի հանձնարարականներով արտարժույթի առուվաճառքի գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներով և կարգով:

1.17. Հաշվին/Հաշիվներին առկա դրամական միջոցների դրական մնացորդի նկատմամբ Բանկի կողմից հաշվարկվում է Սակագներով և/կամ Դիմում-պայմանագրերով սահմանված տարեկան տոկոսադրույք, որի հիման վրա հաշվարկված գումարները մուտքագրվում են Հաշվին՝ եռամսյակը մեկ անգամ, եթե այլ բան նախատեսված չէ Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով և/կամ Պայմանագրերով:

1.18. Հաճախորդը կարող է հաշիվներով կատարել կանխիկ դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման գործառնություններ՝ սահմանված Տեղեկատվական ամփոփագրերին և/կամ Սակագներին համապատասխան Բանկի կողմից Պայմանագրով և/կամ ՀՀ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

1.19. Բանկն իրավունք ունի.

1.19.1. ի կատարումն փողերի լվացման և ահաբեկչության (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ միջազգային կամ ՀՀ նորմատիվ և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջների՝ Հաճախորդից պահանջել ներկայացնելու բոլոր անհրաժեշտ տեղեկությունները Հաշվով կատարվող գործարքների վերաբերյալ, իսկ վերջիններս չտրամադրելու դեպքում՝ կասեցնել Հաշվով գործարքներ կատարելուց կամ մերժել Հաշվով գործարքի կատարումը (այդ թվում մերժել Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելը):

1.19.2. Նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է Բանկի կողմից տրամադրված համապատասխան փաստաթուղթը, Հաճախորդի կողմից պատշաճ կարգով լրացնելու կամ Հաճախորդներից հավելյալ փաստաթուղթ /պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն/ պահանջելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով,

1.19.3. ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից Հաճախորդի մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ համաձայնության դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդին սպասարկել միայն հաշվի առնելով Բանկի կողմից Հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի տեղեկությունների բացահայտման, և

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ), Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) (OFAC), Եվրամիության (ԵՄ), ՀՀ կենտրոնական բանկի կամ Բանկի հատուկ ցանկերում ՓԼ/ԱՖ, Միջազգային պատժամիջոցների գծով բացասական տեղեկությունների բացակայության հաստատման պարագայում:

1.19.4. Ֆիզիկական անձանց դեպքում սպասարկման համար հիմք կարող է հանդիսանալ միջազգային պատժամիջոցների տակ գտնվող երկրի կամ տարածքի քաղաքացի կամ ռեզիդենտ չլինելու, նշված երկրներում կամ տարածքներում կենսական և/կամ տնտեսական շահերի բացակայությամբ պայմանավորված Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում Հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը:

1.19.5. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում սպասարկման համար հիմք կարող է հանդիսանալ միջազգային պատժամիջոցների տակ գտնվող երկրում կամ տարածքում գրանցված չլինելը, գործունեության կամ գործարար կապերի (այդ թվում կոնտրագենտների), մասնակիցների (իրական շահառուների) ուղղակի կամ անուղղակի կապի բացակայությունը նշված երկրի կամ տարածքի հետ և/կամ Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը:

1.19.6. ՓԼ/ԱՖ, միջազգային պատժամիջոցների կիրառմամբ և/կամ ֆորսմաժորային իրավիճակներում (այդ թվում ՀՀ տարածքից դուրս) արտարժույթի շուկայում դրսևորվող փոխարժեքի կտրուկ տատանումներով (որևէ օրվա/օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության 5 տոկոս և ավել կուտակային աճի/նվազման դեպք/եր/ում)պայմանավորված և դրանցից բխող ռիսկերը կանխարգելելու նպատակով՝ սահմանել հաճախորդների կողմից արտարժույթով կատարվող գործարքների իրականացման սահմանաչափերն ու վճարման կարգը, այդ թվում՝ ժամանակավորապես սահմանափակել, և/կամ մասնակի բավարարել՝ ելքագրման, փոխանցման, արտարժույթի փոխարկման գործարքները՝ հիմք ընդունելով գործարքի իրականացման պահին Բանկի ներքին իրավական ակտերով և Բանկի պաշտոնական էլեկտրոնային կայքում հրապարկված սպասարկման հատուկ ընթացակարգերը, պայմանագրային սակագները և գործարքային գների օրական գնանշումները:

1.19.7.Բանկի կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի շրջանակներում (այդ թվում՝ միջազգային պատժամիջոցների մասով) կասկածելի կամ բարձր ռիսկային գործարքների իրականացումը կանխելու նպատակով հրաժարվել իրականացնել հաշիվ/ների սպասարկումը, Հաճախորդի

հաշվարկադրամարկղային փաստաթղթերում կասկածներ հայտնաբերելու դեպքում անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին, եթե Հաշվով կատարվող գործարքը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը,

1.19.8. Չբացել Հաշիվ և/կամ դադարեցնել Հաշվով իրականացվող բանկային գործառնությունները, եթե Հաճախորդը ողջամիտ ժամկետում Բանկ չի ներկայացնում Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը կամ Հաճախորդի բացատրություններն ու ներկայացված փաստաթղթերը Բանկի կողմից գնահատվում են անբավարար, կասկածելի և/կամ ոչ նպատակային, ինչպես նաև Պայմաններով, Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով, առանձին ծառայության պայմաններով նախատեսված այլ դեպքերում.

1.19.9. հաշվանցել Բանկի և Հաճախորդի հանդիպական պահանջները,

1.19.10. Հաշվից /ներառյալ Բանկում ունեցած այլ հաշիվներից, այդ թվում՝ արտարժութային/ գանձել Սակագներով նախատեսված միջնորդավճարները, Հաճախորդի հանձնարարականների կատարման հետ կապված Բանկի կրած ծախսերի գումարները /որոնք Հաճախորդը սույնով պարտավորվում է փոխհատուցել Բանկին/, ինչպես նաև Բանկի հանդեպ Հաճախորդի ունեցած այլ պարտավորությունների գծով գումարները: Ընդ որում, Բանկի դրամական պահանջները և գործարքների համար գանձումները առաջնահերթ գանձվում են գործարքի առարկա կամ ՀՀ դրամով հաշվ/ներ/ից, իսկ վերջին/ներ/իս վրա միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Հաճախորդի արտարժութային հաշվ/ներ/ից, որի արդյունքում արտարժույթի՝ ՀՀ դրամի փոխարկումն իրականացվում է փոխարկման պահին Բանկում գործող տվյալ արտարժույթի առքի փոխարժեքով, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան սահմանված չէ:

1.19.11. Սույն կետը Դիմում-պայմանագրի գործողության ողջ ժամկետում հանդիսանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 922 հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Հաճախորդի կողմից Բանկին տրված կարգադրություն:

1.19.12. Լուծել Դիմում-պայմանագիրը և դադարեցնել հաշվի սպասարկումը՝ պահանջելով վճարել տվյալ պահին վճարման ենթակա բոլոր գումարները, այդ թվում Վճարային սահմանաչափը գերածախսած գումարները, ինչպես նաև մինչև վճարման օրը հաշվարկված տուժանքի գումարները Հաշվի սառեցումից (տնօրինման սահմանափակումից) մեկ տարի հետո:

1.20. Բանկն կիրավունք ունի սահմանափակել հաշվի տնօրինումը

1.20.1. Հաճախորդի դիմումի կամ հանձնարարականի հիման վրա,

1.20.2. վեց ամսվա ընթացքում Հաճախորդի կողմից Հաշվով որևէ գործառնություն չկատարվելու դեպքում,

1.20.3. եթե Հաճախորդի պարտավորության կատարման ապահովման միջոց է հանդիսանում Հաշվի դրամական միջոցների գրավը,

1.20.4. եթե Հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չկատարված պարտավորություններ, այդ թվում՝ երրորդ անձանց տրված երաշխավորության ուժով,

1.20.5. եթե Բանկի պահանջով Հաճախորդը սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթեր և տեղեկատվություն,

1.20.6. եթե Հաճախորդի գործունեությունը կամ նրա կողմից կատարված որևէ գործառնություն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից դիտարկվել է որպես կասկածելի լինելու չափանիշներին համապատասխանող և դրա համար պահանջվող հիմնավոր փաստաթղթերը և/կամ փաստարկները չեն ներկայացվել նշված ժամկետներում,

1.20.7. եթե Հաճախորդի գործունեությունը դիտարկվել է կասկածելի,

1.20.8. եթե Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, հարկային մարմինների և/կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ արգելանք է դրվել Հաճախորդի հաշիվների վրա

1.20.9. Հաճախորդի հետ կնքված այլ պայմանագր/եր/ով սահմանված դեպքերում,

1.20.10. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

1.21. Բանկն իրավունք ունի Հաշվից/հաշիվներից անակցեպտ կարգով գանձումներ կատարել.

1.21.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Հաճախորդի հանձնարարականի հիման վրա,

1.21.2. Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների գումարի չափով,

1.21.3. Բանկի հետ կնքված այլ պայմանագրերով/համաձայնագրերով սահմանված այլ դեպքերում:

1.22. Հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ սահմանափակելու դեպքերում Պայմանագիրը լուծելու և հաշիվը փակելու վերաբերյալ Հաճախորդի դիմումը Բանկի կողմից ենթակա չէ բավարարման, քանի դեռ չեն վերացել հաշվով գործառնությունների դադարեցման համար հիմք ծառայած հանգամանքները:

1.23. Հաճախորդի՝ Բանկում ունեցած Հաշիվներին առկա միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքը չի կարող սահմանափակվել, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվում առկա միջոցների նկատմամբ սահմանափակում կիրառվելու (արգելադրվելու), հաշվով գործառնությունները դադարեցվելու դեպքում, ինչպես նաև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով, ՀՀ օրենսդրությամբ և/կամ Պայմաններով նախատեսված այլ դեպքերում: Նշված տեղեկությունների ճշտումը կատարվում է Բանկի կողմից տրամադրված

համապատասխան փաստաթուղթը Հաճախորդի կողմից պատշաճ կարգով լրացնելու կամ Հաճախորդներից հավելյալ փաստաթուղթ (պայմանագիր, հավաստագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն) պահանջելու և առձեռն կամ Բանկի հետ համաձայնեցված այլ եղանակով Բանկ ներկայացնելու միջոցով:

1.24. Հաճախորդի հաշվարկադրամարկղային փաստաթղթերում կասկածներ հայտնաբերելու դեպքում Բանկն իրավունք ունի անմիջապես կասեցնել գործառնության կատարումը՝ այդ մասին տեղեկացնելով Հաճախորդին, եթե Հաշվով կատարվող գործարքը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը:

1.25. Բանկը պարտավոր է ապահովել Հաճախորդի կողմից հաշվով իրականացվող գործառնությունների (այդ թվում՝ իր ցանկացած հաշվով), ցանկացած հաշիվների մնացորդի, ինչպես նաև Հաճախորդին սպասարկման կապակցությամբ Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը,

1.26. Բանկը պարտավորվում է Հաճախորդի համար հասանելի դարձնել Հաշվի քաղվածքը՝ բացառությամբ այն դեպքերի, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել: Ընդ որում, Բանկի՝ սույն կետում նշված գործողությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.27. Հաճախորդը պարտավոր է Հաշիվն օգտագործել տվյալ հաշվի նպատակային նշանակությանը համապատասխան:

1.28. Հաճախորդը պարտավոր է Բանկին վճարել Տեղեկատվական ամփոփագրերով և/կամ Սակագներով և/կամ Դիմում-պայմանագրով սահմանված վճարները, այդ թվում՝ տուժանքները՝ քարտային հաշվին գերածախսի գոյացման դեպքում: Ինչպես նաև, Հաճախորդը պարտավոր է Հաշվի քաղվածքի ձևավորման պահից 15 /տասնհինգ/ օրվա ընթացքում մարել Վճարային սահմանաչափը գերածախսած գումարները, միջնորդավճարները և դրանց դիմաց հաշվարկված տոկոսներն ու տույժերը:

1.29. Հաճախորդի կողմից Հաշվի մնացորդի ճշտությունը կարող է վիճարկվել Հաշվից քաղվածքը ստանալու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում, որի դեպքում Բանկը Հաճախորդի հետ միասին կատարում է փոխադարձ հաշվարկ և Բանկի մեղքով տեղի ունեցած անճշտության հայտնաբերման դեպքում 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում կատարում ուղղում:

1.30. Հաճախորդն իրավունք չունի Հաշվին առկա կամ հետագայում մուտքագրվող միջոցները գրավ դնել հօգուտ երրորդ անձի՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

1.31. Բանկը Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ ունի առաջնահերթ բավարարում ստանալու իրավունք՝ որպես Բանկի հանդեպ Հաճախորդի ստանձնած/ստանձնելիք բոլոր պարտավորությունների

պատշաճ կատարման ապահովման միջոց:

1.32. Սահմանափակ **հաշվարկային հաշվի առանձնահատկությունները.**

1.32.1. Սահմանափակ հաշվարկային հաշվով կարող են իրականացվել բացառապես հետևյալ գործառնությունները.

1.32.1.1. Կանխիկի մուտքագրում,

1.32.1.2. Այլ հաշիվներից ՀՀ դրամով փոխանցման ստացում,

1.32.1.3. Հավելվածով կոմունալ վճարումներ,

1.32.1.4. Հավելվածով բյուջետային փոխանցումներ, (ներառյալ ճանապարհային ոստիկանության կողմից գանձման ենթակա տուգանքներ, գույքահարկերի վճարում և այլ պետական կամ համայնքային վճարումներ),

1.32.1.5. Համաձայն Տեղեկատվական ամփոփագրի այլ գործառնություններ՝ հաշվի բացման նպատակին համապատասխան:

1.32.2. Սահմանափակ հաշվարկային հաշիվներից կանխիկի ելքագրումն իրականացվում է բացառապես Բանկի մասնաճյուղերում՝ Բանկի կողմից սահմանված կարգով հաճախորդին նույնականացնելուց հետո կանխիկի ելքագրման համար գանձելով Բանկի Սակագներով, Պայմաններով և/կամ Տեղեկատվական ամփոփագրերով հաշվարկային հաշվից կանխիկացման համար սահմանված միջնորդավճարները, ինչից հետո հաշիվը ենթակա է փակման կամ վերափոխման հաշվարկային հաշվի:

1.32.3. Սահմանափակ հաշվարկային հաշիվներով իրականացվող օրական գործարքների առավելագույն սահմանաչափը սահմանվում է 400,000 ՀՀ դրամ:

1.32.4. Բանկի կողմից սահմանված կարգով Հավելվածով, մասնաճյուղի տարածքում կամ Բանկի համար ընդունելու այլ եղանակով հաճախորդին նույնականացնելուց հետո սահմանափակ հաշվարկային հաշիվը վերափոխվում է հաշվարկային հաշվի:

1.33. **Կուտակային հաշվի առանձնահատկությունները .**

1.33.1. Կուտակային հաշվով կարող են իրականացվել բացառապես հետևյալ գործառնությունները.

1.33.1.1. Կանխիկի մուտքագրում,

1.33.1.2. Փոխանցում սեփական հաշիվների միջև,

1.33.1.3. Արտարժույթի փոխանակում սեփական հաշիվների միջև,

1.33.1.4. Ժամկետային ավանդի ներգրավում,

1.33.1.5. Վարկային պարտավարությունների կատարում, այդ թվում՝ անակցեպտ գանձման կարգով,

1.33.1.6. Հաճախորդի պարտավորությունների կատարման նպատակով անակցեպտ գանձումներ: